ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Քրիստոս ծնավ և հայտնեցավ, մեզ և ձեզ մեծ ավետիս:

Սիրելի՛ հավատավոր հայրենակիցներ, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին տոնում է Հիսուս Քրիստոսի ծննդյան և Աստվածահայտնության տոնը:

Օրը առիթ է ևս մեկ անգամ գոհունակություն հայտնելու Աստծուն, աղոթքով դիմելու Նրան, որ խաղաղություն բերի աշխարհի բոլոր ազգերին, դարձի բերի մոլորյալներին, մաքրի մարդկությունը չարից, տգիտությունից և անձապաշտությունից:

Սիրելի՛ հայրենակիցներ, այսօր և միշտ ձեր սրտերում կրեք տոնի խորհուրդը, դարձեք հավատքով աներեր, կամքով անկոտրում և լցվեք անսահման հույսով դեպի գալիքը:

Տուրք մի՛ տվեք աշխարհիկ փառասիրությանը, սիրե՛ք ձեր հայրենիքն ու Աստծուն ձեր անձից առավել և գործեք միայն ի նպաստ ձեր երկրի ու ժողովրդի, քանզի ժողովրդի ձայնն Աստծո ձայնն է:

Թող Տիրոջ աջը զորավիգ և հովանի լինի ձեր ընտանիքներին:

«Հիմա լույս էք ի Տեր. ընթացեք ինչպես լուսո որդիներ. քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը»;

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան